

# 1. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

## 1.1 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ

Որոշակի տարածքում կամ օբյեկտում խոշոր վթարի, վտանգավոր բնական երևույթի, տեխնածին, տարերային կամ էկոլոգիական/բնապահպանական/ աղետի, համաճարակի, անասնահամաճարակի/էպիզոոտիա/, բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդության/էպիֆիտոտիա/, զենքի տեսակների կիրառման հետևանքով ստեղծված իրավիճակ, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին՝ զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդկանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման:

## 1.2. ԱՂԵՏ /ԿԱՏԱՍՏՐՈՖԱ/

Խոշոր վթար, որը մարդկային զոհերի է հանգեցնում, մարդկանց առողջությանը վնաս և քայքայում պատճառում կամ էլ օբյեկտների և այլ նյութական արժեքների զգալի չափերով ոչնչացում առաջացնում, ինչպես նաև լրջորեն վնասում շրջակա միջավայրը:

## 1.3. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՂԲՅՈՒՐ

Վտանգավոր բնական երևույթ կամ անտրոպոգեն,\* տեխնածին/տեխնոգեն/ պատահար, մարդկանց, կենդանիների և բույսերի լայնորեն տարածված հիվանդություն, ինչպես նաև հարձակման ժամանակակից միջոց, որի հետևանքով ծագել է կամ կարող է ծագել արտակարգ իրավիճակ:

## 1.4. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՂԲՅՈՒՐԻ ՍՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակի որևէ աղբյուրի ծագման ու զարգացման պայմանական ֆիզիկական կամ մաթեմատիկական ներկայացումը, ինչպես նաև այդ աղբյուրի հետազոտումը նրա մոդելի կառուցման և ուսումնասիրման միջոցով:

-----  
\* Անտրոպոգեն/հունարեն անտրոպոս՝ մարդ+գենոս՝ ծնունդ, ծագում/մարդու գործունեության, միջամտության հետևանքով առաջացող վտանգավոր պատահար, աղետ:

### 1.5. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպական, տնտեսական, ինժեներատեխնիկական, բնապահպանական և հատուկ համալիր միջոցառումներ՝ արտակարգ իրավիճակների աղբյուրների ծագումը նախազգուշացնելու, դրանց հարուցած վտանգը հաղթահարելուն նախապատրաստվելու և հետևանքները վերացնելու, արտակարգ իրավիճակներում մարդկանց կյանքն ու առողջությունը պահպանելու, տնտեսությունում և քաղաքացիների անձնական ունեցվածքում կորուստներն ու քայքայումը նվազեցնելու, շրջակա բնական միջավայրին հասցվող վնասը սահմանափակելու նպատակով:

### 1.6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Որոշակի երկրում, տարածաշրջանում արտադրողական ուժերի զարգացման այնպիսի մակարդակ և դրանց այնպիսի տեղաբաշխում, որոնք արտակարգ իրավիճակներում էկոնոմիկայի բնականոն աշխատանքը խաթարող ու շեղող գործոնների ազդեցությունից հետո նրան հնարավորություն են տալիս բնակչության կենսաապահովման համար արտադրանք թողարկել/ծառայություններ մատուցել/ և կարևորագույն տնտեսական խնդիրներ լուծել:

### 1.7. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Արտակարգ իրավիճակներում որոշակի երկրի, տարածաշրջանի կարողությունը՝ տարբեր շեղող, խաթարող գործոնների ազդեցության հետևանքով խախտված արտադրությունն արագ վերականգնելու, սահմանված անվանացուցակով ու ծավալներով արտադրանք թողարկելու, իր գործառությունները կատարելու, պահանջվող ծառայությունները մատուցելու, ինչպես նաև բնակչության կենսագործունեությունն ապահովելու ասպարեզներում:

### 1.8. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄ

Արդյունաբերական վթարները կամ աղետները կանխելու և դրանց հետևանքով պայմանավորված վնասը նվազեցնելու նպատակով կազմակերպական ու ինժեներատեխնիկական միջոցառումներ:

### 1.9. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Վիճակ, որի դեպքում իրավական նորմերի, տնտեսական, ինժեներատեխնիկական և տեխնոլոգիական պահանջների պահպանման, ինչպես նաև համապատասխան միջոցառումների իրականացումով արդյունաբերական օբյեկտներում, տրանսպորտում ձեռք է բերվում տեխնոլոգիական գործընթացի ու անվտանգության տեխնիկայի խախտման կանխում, վթարային իրավիճակի առաջացման հավանականության առավելագույն նվազում կամ վնասի պակասեցում:

#### 1.10. ԷՊԻԶՈՏԻԱ/ԱՆԱՄՆԱՅԱՍԱՃԱՐԱԿ/

Կենդանիների մեկ կամ շատ տեսակների մեծ քանակության մեջ վարակիչ հիվանդության միաժամանակյա տարածում, որը զգալիորեն գերազանցում է տվյալ վայրին բնորոշ հիվանդացության սովորական մակարդակը:

#### 1.11. ԷՊԻՖԻՏՈՏԻԱ

Մեծ տարածքում որոշակի ժամանակահատվածում բույսերի և գյուղատնտեսական մշակաբույսերի լայնորեն տարածված վարակիչ հիվանդություն:

#### 1.12. ՀԱՍԱՃԱՐԱԿ

Որոշակի տարածաշրջանի սահմաններում մարդկանց մեջ զանգվածային, հարածունորեն տարածվող վարակիչ հիվանդություն, որը զգալիորեն գերազանցում է տվյալ տարածքում սովորաբար գրանցվող հիվանդացության մակարդակը:

#### 1.13. ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋՈՑՆԵՐ

Ջորքերի սպառագիմման մեջ գտնվող հարձակման այն միջոցները, որոնց գործադրումը պատերազմի ժամանակ առաջացնում է կամ կարող է առաջացնել մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների ու բույսերի զանգվածային ոչնչացում, տնտեսության օբյեկտների, բնական միջավայրի տարրերի քայքայում և վնասում, ինչպես նաև երկրորդական հարվածի գործոնների ծագում:

#### 1.14. ՀՐԴԵՅ

Այրման չվերահսկվող գործընթաց, որն ուղեկցվում է արժեքների ոչնչացումով և մարդկանց կյանքի ու առողջության, գյուղատնտեսական կենդանիների և բույսերի համար վտանգ է ստեղծում:

#### 1.15. ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Տնտեսության կամ այլ նշանակության օբյեկտի այնպիսի վիճակ, որի դեպքում իրավական նորմերի, հակահրդեհային և ինժեներատեխնիկական միջոցառումների միջոցով բացառվում կամ նվազում է հրդեհի առաջացման ու զարգացման, մարդկանց վրա հրդեհի վտանգավոր գործոնների ներգործության հավանականությունը, ինչպես նաև ապահովվում է նյութական արժեքների պաշտպանությունը:

### 1.16. ԶՐԴԵՅԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄ

Կազմակերպական, հակահրդեհային և հատուկ համալիր միջոցառումներ, որոնք ուղղված են հրդեհներ առաջանալու պայմանները և մարդկանց վրա հրդեհի վտանգավոր գործոնների ներգործությունը բացառելուն կամ նրա առավելագույնս նվազեցնելուն, ինչպես նաև նյութական արժեքների պաշտպանությունը ապահովելուն:

### 1.17. ՈԱԴԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄ

Կազմակերպական, հատուկ համալիր միջոցառումներ, որոնք ուղղված են մարդու օրգանիզմի վրա իոնացնող ճառագայթման վնասակար ներգործության վտանգը բացառելուն կամ առավելագույնս նվազեցնելուն և շրջակա միջավայրի ռադիոակտիվ աղտոտումը մինչև անվտանգ մակարդակներ իջեցնելուն:

### 1.18. ՈԱԴԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Վիճակ, որի դեպքում իրավական նորմերի պահպանման, հիմնական սանիտարական կանոնների ու տեխնիկական պահանջների կատարման, ինչպես նաև համապատասխան կազմակերպական, տեխնիկական ու սանիտարահիգիենիկ միջոցառումների միջոցով առավելագույնս թուլանում կամ բացառվում է մարդու օրգանիզմի վրա իոնացնող ճառագայթման վնասակար ներգործությունը, սահմանափակվում է մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների, բույսերի և շրջակա բնական միջավայրի ռադիոակտիվ աղտոտումը:

### 1.19. ՈԱԴԻՈԱԿՏԻՎ ԱՂՏՈՏՈՒՄ

Չողի մակերևույթին, մթնոլորտում, ջրում կամ սննդամթերքների, անասնակերի, սննդահումքի և տարբեր առարկաների վրա ռադիոակտիվ նյութերի տարածումը կամ առկայությունը այնպիսի քանակներով, որոնք գերազանցում են բնական միջավայրում դրանց պարունակության սովորական մակարդակը, կամ էլ այն մակարդակը, որը սահմանված է ռադիացիոն անվտանգության չափաքանակներով ու ռադիոակտիվ նյութերի հետ աշխատելու կանոններով:

### 1.20. ՎԹԱՐ

Տնտեսության օբյեկտում կամ տրանսպորտում տեղի ունեցող վտանգավոր պատահար, որը մարդկանց կյանքին ու առողջությանը սպառնալիք է ներկայացնում կամ էլ հանգեցնում է արտադրական շենքերի ավերման, սարքավորումների, մեխանիզմների, տրանսպորտային միջոցների, հումքի ու պատրաստի արտադրանքի վնասման կամ ոչնչացման, ինչպես նաև արտադրական գործընթացի խախտման:

### 1.21. ՎՏԱՆԳԱՎՈՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Տնտեսության մեջ և կենցաղում օգտագործվող բնական կամ արհեստական ծագում ունեցող քիմիական նյութ, որի պարունակության սովորական մակարդակը շրջակա բնական միջավայրում գերազանցելը վնասակար ազդեցություն է գործում մարդու, գյուղատնտեսական կենդանիների և բույսերի վրա:

### 1.22. ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏ

Բնական և բնական-անտրոպոգեն ավերիչ երևույթ, գործընթաց, որի հետևանքով մարդկանց կյանքի ու առողջության համար կարող է ծագել կամ ծագել է սպառնալիք, տեղի ունենալ նյութական արժեքների և շրջակա բնական միջավայրի տարրերի քայքայում ու ոչնչացում:

### 1.23. ՏԵԽՆԱԾԻՆ /ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ/ ԱՂԵՏ

Տեխնոլոգիական գործընթացը խախտելու հետևանքով ծագող վտանգավոր պատահար, որը հանգեցնում է մարդկանց մահվան և անձնակազմի առողջության սպառնալիքի, ինչպես նաև զգալի ուղղակի կամ անուղղակի վնաս է պատճառում նյութական արժեքներին և շրջակա միջավայրին:

### 1.24 ՈՒԺԵՂ ՆԵՐԳՈՐԾՈՂ ԹՈՒՆԱԿՈՐ ՆՅՈՒԹ /ՈՒՆԹՆ/

Վտանգավոր քիմիական նյութ, որը հողի մակերեսին, ջրի մեջ թափվելիս կամ մթնոլորտ արտանետվելիս կարող է առաջացնել մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների ու բույսերի մահ ու ոչնչացում: Հնարավոր է նաև օդի, բնահողի/գրունտի/ և ջրի վարակում այնպիսի վտանգավոր խտությամբ, որը կսպառնա մարդկանց կյանքին ու առողջությանը, գյուղատնտեսական կենդանիներին և բույսերին:

### 1.25. ՔԻՄԻԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄ

Կազմակերպական և հատուկ միջոցառումներ, որոնք ուղղված են քիմիական վտանգավոր օբյեկտներում կամ արդյունաբերական կայանքում արտակարգ իրավիճակի աղբյուրի ծագման հետևանքով մարդու օրգանիզմի, գյուղատնտեսական կենդանիների և շրջակա բնական միջավայրի վրա քիմիական վարակի վնասակար ազդեցությունը բացառելուն կամ առավելագույնս նվազեցնելուն:

### 1.26. ՔԻՄԻԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Վիճակ, որի ժամանակ իրավական նորմերի և սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման, տեխնոլոգիական ու ինժեներատեխնիկական պահանջների կատարման, ինչպես նաև համապատասխան կազմակերպական ու հատուկ միջոցառումների

միջոցով քիմիական վթար առաջանալու դեպքում բացառվում է մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների և բույսերի քիմիական վարակման կամ ախտահարման, վտանգավոր քիմիական նյութերով շրջակա բնական միջավայրի աղտոտման համար պայմանների ստեղծումը:

#### 1.27. ՔԻՄԻԱԿԱՆ ՎԹԱՐ

Տեխնոլոգիական սարքավորումից, վնասված տարայից վտանգավոր քիմիական նյութերի հոսակորուստով և արտանետումով ուղեկցվող վթար, որը կարող է հանգեցնել մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների ու բույսերի վարակման, ոչնչացման կամ էլ շրջակա բնական միջավայրը, մարդկանց, կենդանիների և բույսերի համար վտանգավոր պարունակության քիմիական նյութերով աղտոտման:

#### 1.28. ՔԻՄԻԱԿԱՆ ՎԱՐԱԿՈՒՄ

Շրջակա բնական միջավայրում այնպիսի խտության կամ քանակության վտանգավոր քիմիական նյութերի տարածում, որոնք որոշակի ժամանակի ընթացքում մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների ու բույսերի համար սպառնալիք են ստեղծում:

### 2. ՀԱՍՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇՐՋԱԿԱ ՄԻՋՎԱՅՐԻ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

#### 2.1. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԿԱՏԱԼՈԳ/ՑՈՒՑԱԿ/

Ըստ իրենց ծագման բնույթի ընտրված և արտակարգ իրավիճակների առաջացման սկզբնապատճառ հանդիսացող վտանգավոր դեպքերի ու երևույթների համակարգված կատալոգ կամ գիտատեխնիկական նշանակության տեղեկատու հրատարակություն:

#### 2.2. ԴԵՏԵՐԻՈՐԱՑԻՈՆ ԿԱԴԱՍՏՐ/ԱՄՓՈՓԱԳԻՐ/

Շրջակա բնական միջավայրի վիճակի և վատթարացման մասին տվյալների/տեղեկությունների/ ամփոփագիր, որը կազմվում է տարածաշրջանային կտրվածքով՝ հաշվի առնելով աղտոտման կամ այլ խախտումների բոլոր աղբյուրներն ու բնական ոլորտի վատթարացման մեջ դրանց մասնակցությունը, բնական համալիրների և մարդու վրա դրանց ներգործելու ձևերն ու ինտենսիվությունը:

#### 2.3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋՎԱՅՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Շրջակա միջավայրի վիճակը դիտելու համակարգ, որը ապահովում է նրա ելակետային/սկզբնական/ կացությունը գնահատելն ու փոփոխությունների միտումները ժամանակին բացահայտելը:

## 2.4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

Մարդու բնակվելու և հասարակական-արտադրական գործունեության միջավայրերի ամբողջությունը, որն ընդգրկում է շրջակա բնական միջավայրը և մշակութային կամ սոցիալ-տնտեսական միջավայրի տարրերը, որոնք համատեղ ու անմիջականորեն ազդում են մարդկանց և նրանց տնտեսության վրա:

## 2.5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդու և շրջակա միջավայրի վրա տարերային և էկոլոգիական աղետների, վթարների, աղետների կամ մարդկանց տնտեսական ու արտադրական գործունեության հետևանքների բացասական ազդեցության կանխումը, սահմանափակումը նվազեցումը՝ իրավական, բնապահպանական, տնտեսական, սոցիալական, կազմակերպական ու ինժեներատեխնիկական համալիր միջոցառումներ իրականացնելով:

## 2.6. ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդու գործունեության և շրջակա բնական միջավայրի միջև փոգործակցությունը աջակցելուն, նրա ռեսուրսների պահպանումը ապահովելուն, ռացիոնալ օգտագործելուն ու վերականգնելուն ուղղված իրավական, կազմակերպական-տնտեսական, տեխնոլոգիական, հասարակական-քաղաքական միջոցառումներ, որոնք կանխում են բնության և մարդու առողջության վրա հասարակության գործունեության արդյունքների ուղղակի և անուղղակի ազդեցությունները:

## 2.7. ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՐԵՎՈՒՅԹ

Վտանգավոր գործընթաց կամ սպառնացող վտանգ, որը հարուցվում, ծագում է երկրաբանական գործընթացների կամ դրանց հետ կապված դեֆորմացիոն/ձևախախտման/ այնպիսի երևույթների հետևանքով, որոնք հանգեցնում են մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների ու բույսերի կորստի, տնտեսության օբյեկտների զգալի վնասի և բնական միջավայրի տարրերի ավերման:

Երկրաբանական վտանգավոր երևույթներ են համարվում հեղեղները, սողանքները, սելավները, քարաթափումները, փլուզումները:

## 2.8. ԲՆԱԿԱՆ-ՏԵԽՆԱԾԻՆ ԱՂԵՏ

Արդյունաբերական համակարգեր և օբյեկտներ ունեցող միջավայրի տեղական ծավալների, ինչպես նաև շրջակա միջավայրի կրիտիկական ռեակցիան նրանց վրա դրված լրացուցիչ ծանրաբեռնվածության նկատմամբ, որն առաջանում է բնական կամ գեոդինամիկ և տեխնաժին պատճառներով՝ հանգեցնելով մարդկանց մահվան, տնտեսության օբյեկտների քայքայման ու վնասման, բնական միջավայրի տարրերի խախտման:

Բացահայտված են բնական-տեխնաժին աղետների ռիսկի առաջացման երկու հնարավոր ուղիներ. առաջինը՝ անկանոն բնական կամ գեոդինամիկ գործընթացների ուղղակի ազդեցությունն է արդյունաբերական համակարգերի և օբյեկտների կայունության, ամենից առաջ առանձնահատուկ պատասխանատու/ԱԷԿ, քիմիական կոմբի-

նատներ/ օբյեկտների վրա, որոնք արտահայտվում են վնասակար քիմիական և ռադիոակտիվ նյութերի ու ախտածին կենսաբանական միջոցների հայտնվելով:

Երկրորդը՝ միջավայրի վրա մարդու տեխնածին ազդեցությունն է, որն առաջացնում է նրա պատասխան ռեակցիան բնական-տեխնածին գործընթացների ձևով, ինչպիսիք են՝ բնահողի/գրունտի/ նստելը, երկրաշարժ հարուցելը, վնասակար գազերի և մարդու համար վտանգավոր այլ բաղադրիչների մթնոլորտ արտանետվելը: Այս աղետների ռիսկի կառավարման գործում մեծ դեր է խաղում արդյունաբերական համակարգերի ու օբյեկտների էկոլոգիական- գեոդինամիկական մոնիտորինգ ստեղծելը:

## 2.9. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԳՈՏԻ

Արդյունաբերական ձեռնարկության շուրջը առանձնացված վերահսկվող տարածք՝ տեխնոլոգիական կայանքների և այն վայրերի միջև համապատասխան հեռավորությունն ապահովելու համար, որոնք օգտագործվում են կամ որտեղ կամ կարող է մուտք գործել նոտակայքում ապրող բնակչությունը: Սանիտարական գոտին ստեղծվում է արտակարգ իրավիճակի աղբյուրներ առաջանալու դեպքում՝ մարդկանց վրա տարբեր վտանգների ներգործությունը կանխելու նպատակով:

## 2.10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱՆԿ

Լրատվական-տեղեկատվական համակարգ, որը պարունակում է կուտակված և աշխատանքային վիճակում պահվող տեղեկությունների ամբողջությունը կամ այնպիսի տվյալների ու մեքենայական ծրագրերի բազա, որոնք անհրաժեշտ են արտակարգ իրավիճակների աղբյուրների ծագումը կանխատեսելու և կանխելու, դրանք վերացնելու, ինչպես նաև մարդկանց, տնտեսության օբյեկտներին և շրջակա բնական միջավայրին սպառնացող վտանգը, ախտահարող գործոնների ազդեցությունն ու դրանց հետևանքները թուլացնելու որոշակի խնդիրներ լուծելու համար:

## 2.11. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ

Իշխանության հատուկ լիազորված գործադիր մարմինների կողմից շրջակա բնական միջավայրի տարրերի կամ նրա առանձին բաղադրիչների պարամետրերի ստուգման, դրանց վիճակի վերահսկողության իրականացում՝ բնապահպանական օրենսդրության, էկոլոգիական նորմատիվների, բնական միջավայրի պահպանության կարգավորման կանոնների ու ստանդարտների պահանջների պահպանումն ապահովելու նպատակով:

## 2.12. ԷԿՈԼՈԳԻԱ

Գիտություն մարդու բնակության միջավայրի կամ բնակության միջավայրի և կենսաբանական համակարգերի վրա բնական գործոնների ու հասարակության տնտեսական գործունեության արդյունքների ազդեցության մասին:



### 2.13. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Վիճակ, որի դեպքում իրավական նորմերի, տնտեսական, բնապահպանական ու ինժեներատեխնիկական պահանջների կատարման և համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով ձեռք է բերվում մարդկանց կյանքին ու առողջությանը վտանգ սպառնացող, տնտեսության և շրջակա բնական միջավայրի համար քայքայիչ էկոլոգիական աղետների հետևանքների կանխում կամ մեղմացում:

### 2.14. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄ

Իրավական, բնապահպանական, ինժեներատեխնիկական և կազմակերպական այն միջոցառումների ամբողջությունը, որոնք ուղղված են արտակարգ էկոլոգիական իրավիճակները կամ էկոլոգիական աղետները նախազգուշացնելուն, թուլացնելուն և վերացնելուն:

### 2.15. ՊԵՏԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՈՐՄԱՎՈՐՈՒՄ

Էկոլոգիական աղետները կանխելու և շրջակա բնական միջավայրը պահպանելու նպատակով նպատակով պետության կողմից էկոլոգիական նորմերի, տնտեսական գործունեության կանոնների և կանոնակարգերի մշակմանն ու հաստատմանն ուղղված գիտահետազոտական և նորմատիվային-իրավական գործունեություն:

### 2.16. ԱՐՏԱԿԱՐԳ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Տարերային աղետի կամ մարդու տնտեսական գործունեության հետևանքով շրջակա միջավայրի բնական կամ սովորական վիճակի վտանգավոր շեղում, որը հանգեցնում է տնտեսական ու սոցիալական բնույթի անբարենպաստ հետևանքների և սահմանափակ տարածքում անմիջական սպառնալիք է ներկայացնում մարդկանց կյանքին ու առողջությանը, էկոնոմիկային և շրջակա բնական միջավայրի տարրերին:

### 2.17. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՂԵՏ

Տարերային աղետների և տեխնածին վթարների կամ բնական գործընթացների վրա մարդու տնտեսական գործունեության ազդեցության հետևանքով բնության մեջ առաջացած անկանոնություն, որը հանգեցնում է բնական միջավայրի անբարենպաստ փոփոխությունների, մարդկանց կյանքի ու առողջության սպառնալիքի, ինչպես նաև տնտեսության վնասի:

### 2.18. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՎՏԱՆԳ

Բնական գործոնների կամ մարդու տնտեսական գործունեության ազդեցության հետևանքով բնական միջավայրի տարրերի որակի վատթարացման հավանականութե-

յուն, որը կարող է հանգեցնել մարդկանց կյանքի ու առողջության, էկոլոգիական բաղադրիչների գոյության սպառնալիքի:

## 2.19. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԻՍԿ

Բնության, հասարակության կամ էկոլոգիական համակարգերի համար մարդու տնտեսական գործունեության ու տարերային աղետների բացասական հետևանքների այնպիսի հավանական վտանգ կամ սպառնալիքի առաջացում, որը չափվում է համապատասխան ցուցանիշներով:

## 2.20. ԴԵՏԵՐԻՈՐԱՑԻՈՆ ԿԱԴԱՍՏՐ/ԱՄՓՈՓԱԳԻՐ/

Շրջակա բնական միջավայրի վատթարացման մասին տեղեկությունների ամփոփագիր, որը կազմվում է տարածաշրջանային կտրվածքով՝ հաշվի առնելով աղտոտման կամ այլ խախտումների բոլոր աղբյուրներն ու բնական միջավայրի վատթարացման գործում դրանց մասնակցության աստիճանը, ինչպես նաև բնական համալիրների և մարդու վրա ազդեցության ձևերն ու ինտենսիվությունը:

## 2.21. ՊԵՏԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Որոշակի տարածքում մարդկանց կյանքի ու առողջության, գյուղատնտեսական կենդանիների, բույսերի և բնական միջավայրի վրա տնտեսական նորանվճարումների ու միջոցառումների, ինչպես նաև հավանական արտակարգ էկոլոգիական իրավիճակների հնարավոր ազդեցության վերաբերյալ պաշտոնական անձանց կամ կազմակերպությունների կողմից հատուկ նպատակով լիազորված մասնագետների զննահատական, որն արտահայտվում է թե տնտեսական, թե արտատնտեսական ցուցանիշներում:

## 3. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ

### 3.1. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՈՏԻ

Տարածք կամ ջրատարածք, որտեղ արտակարգ իրավիճակի աղբյուրի առաջացման հետևանքով տեղի է ունեցել մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների ու բույսերի ոչնչացում, վնաս հասցվել բնակչության առողջությանը, ինչպես նաև շրջակա բնական միջավայրին:

### 3.2. ՀԱՎԱՆԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՈՏԻ

Տարածք կամ ջրատարածք, որտեղ գոյություն ունի կամ էլ բացառված չէ արտակարգ իրավիճակի ծագման հավանականությունը:

### 3.3. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ-ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻ

Պոտենցիալ վտանգավոր օբյեկտի շուրջը գտնվող տարածք, որը սահմանվում է մարդկանց կյանքի ու առողջության, գյուղատնտեսական կենդանիների և բույսերի վրա այդ օբյեկտի աշխատանքի վնասակար գործոնների ազդեցությունը կանխելու կամ նվազեցնելու համար:

### 3.4. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԳՈՏԻ

Տարածք կամ ջրային տարածության տեղամաս, որտեղ մարդու բացասական տնտեսական գործունեությունը կարող է արտակարգ էկոլոգիական իրավիճակ հարուցել:

### 3.5. ԲԱՐՁՐ ՌԻՍԿԻ ԳՈՏԻ

Տարածք կամ ջրատարածք, որտեղ հավանական է արտակարգ իրավիճակի բնական կամ տեխնածին աղբյուրների ծագման վտանգը:

### 3.6. ՎԱՐԱԿՄԱՆ ԳՈՏԻ

Տարածք, որի սահմաններում տարածված են կամ որտեղ բերվել են այնպիսի քանակությամբ վնասակար քիմիական նյութեր և ախտածին կենսաբանական/մանրէաբանական/ միջոցներ, որոնք որոշակի ժամանակի ընթացքում մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների ու բույսերի համար վտանգ են ստեղծում:

### 3.7. ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ /ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ/ ՎԱՐԱԿԻ ԳՈՏԻ

Տարածք, որի սահմաններում տարածված են կամ որտեղ բերվել են ախտածին կենսաբանական/մանրէաբանական/ միջոցներ, որոնք վտանգավոր են մարդկանց կյանքի ու առողջության, գյուղատնտեսական կենդանիների և բույսերի համար:

### 3.8. ՈԱԴԻՈԱԿՏԻՎ ԱՂՏՈՏՄԱՆ ԳՈՏԻ

Տարածք, որի սահմաններում տարածված են կամ որտեղ բերվել են այնպիսի քանակությամբ ռադիոակտիվ ճառագայթահարման աղբյուրներ, որոնք գերազանցում են շրջակա բնական միջավայրում դրանց պարունակության սովորական մակարդակը:

### 3.9. ՔԻՄԻԱԿԱՆ ՎԱՐԱԿՄԱՆ ԳՈՏԻ

Տարածք, որի սահմաններում տարածվել են կամ որտեղ բերվել են այնպիսի քանակությամբ վնասակար քիմիական նյութեր, որոնք որոշակի ժամանակահատվածում վտանգ են ստեղծում մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների ու բույսերի համար:

### 3.10. ՀԵՂԵՂՄԱՆ ԳՈՏԻ

Տարերային աղետի, հիդրոտեխնիկական կառուցվածքների վնասվելու կամ ավերվելու, ինչպես նաև հարձակման ժամանակակից միջոցների ազդեցության հետևանքով ջրով հանկարծակի լցված տարածք:

### 3.11. ՀԱՎԱՆԱԿԱՆ ՀԵՂԵՂՄԱՆ ԳՈՏԻ

Տարածք, որի սահմաններում հնարավոր է կամ էլ կանխատեսվում է հեղեղման գոտու գոյացում:

### 3.12. ԱՂԵՏԱԼԻ ՀԵՂԵՂՄԱՆ ԳՈՏԻ

Հեղեղման գոտի, որի սահմաններում տեղի են ունեցել մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների ու բույսերի զանգվածային կորուստներ, նյութական արժեքների, առաջին հերթին շենքերի ու կառուցվածքների զգալի վնասում կամ ոչնչացում:

### 3.13. ՀԱՎԱՆԱԿԱՆ ԱՂԵՏԱԼԻ ՀԵՂԵՂՄԱՆ ԳՈՏԻ

Հավանական հեղեղման գոտի, որտեղ սպասվում են կամ հավանական են մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների և բույսերի զանգվածային կորուստներ, նյութական արժեքների, առաջին հերթին շենքերի և կառուցվածքների զգալի վնասում կամ ոչնչացում:

### 3.14. ՀՐԴԵՀՆԵՐԻ ԳՈՏԻ

Տարածք, որի սահմաններում տարերային աղետների, խոշոր վթարների կամ աղետների հետևանքների, ինչպես նաև հարձակման ժամանակակից միջոցների ազդեցության արդյունքում ծագել ու տարածվել են հրդեհներ:

### 3.15. ԴԻՏՄԱՆ ԳՈՏԻ

Սանիտարական-պաշտպանական գոտու շուրջը գտնվող տարածք կամ տեղանք, որտեղ ռադիոակտիվ աղտոտման մշտական դիտում կամ հսկողություն է իրականացվում և հնարավոր է ռադիոակտիվ արտանետումների ազդեցությունը կամ որտեղ

ապրող բնակչության ճառագայթահարումը կարող է հասնել հաստատված դոզայի/բաժնաչափի/ սահմանին:

### 3.16. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

Տարածք կամ ջրատարածք, որոնց վրա սահմանվում է հատուկ սանիտարական-համաճարակային ռեժիմ՝ վնասակար քիմիական նյութերով և ախտածին կենսաբանական/մանրէաբանական/ միջոցներով դրանց աղտոտումը կամ վարակումը, ինչպես նաև կենտրոնացված ջրամատակարարման աղբյուրների ջրի որակի վատթարացումը կանխելու նպատակով կամ ջրատար կառույցների պաշտպանության համար:

### 3.17. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԳՈՏԻ

Տարածք, որտեղից արտակարգ իրավիճակի աղբյուր առաջանալու ժամանակ կամ դրանից հետո տարահանվում կամ ժամանակավորապես արտաբնակեցվում է այնտեղ ապրող բնակչությունը՝ նրա անվտանգությունն ապահովելու նպատակով:

### 3.18. ԱՂԵՏԻ ԳՈՏԻ

Արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած տարածք /բնակավայր, օբյեկտ/ կամ տարածքի մի մաս:

### 3.19. ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄԻ ՇՐՋԱՆ

Տարածք կամ առանձին տեղանք, որտեղ մտցվել է օրենսդրական ակտերով սահմանված ժամանակավոր պետական կառավարման իրավական ռեժիմ՝ արտակարգ այնպիսի հանգամանքներում բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով,

### 3.20. ՎՆԱՍՎԱԾ ՕՋԱԽ

Սահմանափակ տարածք, որի սահմաններում ծագած տարերային աղետի, վթարի կամ աղետի, ինչպես նաև հարձակման ժամանակակից միջոցների ազդեցության հետևանքով տեղի են ունեցել մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների և բույսերի զանգվածային ոչնչացում, շենքերի ու կառուցվածքների զգալի ավերածություններ:

### 3.21. ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՀԱՐՎԱԾԻ ՕՋԱԽ

Սահմանափակ տարածք, որտեղ միջուկային զենքի հարվածող գործոնների ազդեցության հետևանքով տեղի են ունեցել մարդկանց, գյուղատնտեսական կենդա-

նիների ու բույսերի ռադիոակտիվ կամ իոնացնող ճառագայթահարումով զանգվածային ախտահարումներ:

### 3.22. ՀԱՄԱՆԱՐԱԿԱՅԻՆ ՕՋԱԽ

Վարակի ու վարակիչ հիվանդությամբ հիվանդի գտնվելու վայր, նրան շրջապատող մարդիկ և կենդանիներ կամ այնպիսի տարածք, որի սահմաններում որոշակի ժամանակահատվածում հնարավոր է վարակիչ հիվանդությունների հարուցիչներով մարդկանց վարակում:

### 3.23. ՕԲՅԵԿՏ

Միասնական հրապարակում գտնվող տնտեսության նյութական արտադրության կամ ոչ արտադրական ոլորտների ձեռնարկություն, միավորում, հիմնարկություն և կազմակերպություն:

### 3.24. ՊՈՏԵՆՑԻԱԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏ

Տնտեսական կամ այլ օբյեկտ, որտեղ վթարի դեպքում կարող է տեղի ունենալ մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների և բույսերի ոչնչացում, ծագել բնակչության առողջությանը սպառնալիք կամ վնաս հասցվել տնտեսությանն ու շրջակա բնական միջավայրին:

### 3.25. ՌԱԴԻԱՑԻՈՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏ

Օբյեկտ, որտեղ վթարի դեպքում կամ որն ավերվելիս կարող է տեղի ունենալ նախագծով նրա նորմալ շահագործման համար նախատեսվածից ավելի ռադիոակտիվ նյութերի ելք կամ իոնացնող ճառագայթում: Դա կարող է հանգեցնել մարդկանց զանգվածային ճառագայթահարման, գյուղատնտեսական կանդանիների ու բույսերի իոնացնող ճառագայթման, ինչպես նաև շրջակա միջավայրի ռադիոակտիվ աղտոտման:

### 3.26. ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏ

Ցանկացած միջուկային ռեակտոր, գործարան, որ օգտագործում է միջուկային վառելիք կամ վերամշակում միջուկային նյութ, ներառյալ ճառագայթահարված միջուկային վառելիքի վերամշակման գործարան, ինչպես նաև նյութի պահպանման վայր և միջուկային նյութ կամ իոնացնող ճառագայթման աղբյուր փոխադրող տրանսպորտային միջոց:

### 3.27.ՔԻՄԻԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕՔՅԵԿՏ

Օբյեկտ, որտեղ վթարի դեպքում կամ որն ավերվելիս կարող է տեղի ունենալ մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների և բույսերի զանգվածային թունավորում կամ շրջակա բնական միջավայրի քիմիական վարակում այնպիսի քանակությամբ վնասակար քիմիական նյութերով, որոնք գերազանցում են դրանց պարունակության բնական մակարդակը:

### 3.28. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕՔՅԵԿՏ

Էկոնոմիկայի, պաշտպանական կամ բնության օբյեկտ, որի վիճակն ու գործելը հանգեցնում են կամ կարող են հանգեցնել բացասական ներգործության՝ մարդկանց, գյուղատնտեսական կենդանիների, բույսերի, շրջակա բնական միջավայրի, ինչպես նաև նրա առանձին բաղադրատարրերի վրա:

## **4.ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ: ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՒԺԵՐ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ**

### 4.1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ բնակչությանն ու տնտեսության օբյեկտները պաշտպանելու նպատակով իրականացվող պաշտպանական, ինժեներատեխնիկական և կազմակերպական միջոցառումների համակարգ:

### 4.2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ/ՔՊՇ/

Քաղաքացիական պաշտպանության կառավարման մարմին, որը կոչված է ապահովելու խաղաղ և պատերազմական ժամանակներում տարածքային ու ճյուղային օդակներում քաղաքացիական պաշտպանության կազմակերպման անմիջական ղեկավարումը:

### 4.3.ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԵՐԹԱՊԱՅ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Արտակարգ իրավիճակներում նախազգուշացնելու և գործելու համակարգի կառավարման մարմնին կից մշտական հերթապահության խումբ, որը անհետաձգելի միջոցներ է ձեռք առնում արտակարգ իրավիճակի գոտում կամ տնտեսության օբյեկտում վթարային-փրկարարական, վթարային-վերականգնողական և այլ շտապ աշխատանքներ կատարելու համար:

#### 4.4. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ /ՔՊ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ/

Քաղաքացիական պաշտպանության ազդարարման ուժերի ու մասնագիտացված միջոցների, ինչպես նաև համապետական և գերատեսչական այն ցանցերի կազմակերպական-տեխնիկական միավորումը, որոնք ապահովում են արտակարգ իրավիճակի մասին տեղեկատվության, քաղաքացիական պաշտպանության ազդանշանների և ինֆորմացիայի հաղորդումը:

#### 4.5. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԱՆՇԱՆ /ՔՊ ԱԶԴԱՆՇԱՆ/

Ազդանշան, որը տրվում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների նախազգուշացման, կանխման ու վերացման համակարգերում և հանդիսանում է հրաման քաղպաշտպանության ու արտակարգ իրավիճակների վերացման միջոցառումների անցկացման կամ ուժերի գործողությունների համար, ինչպես նաև արտակարգ իրավիճակների առաջացման, հակառակորդի հարձակման կամ դրանց սպառնալիքի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման համար:

#### 4.6. ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Հաղորդում, որը քաղաքացիական պաշտպանության ազդարարման համակարգով և նրա ազդանշանների ու ինֆորմացիայի հետ տրվում է կառավարման մարմիններին, արտակարգ իրավիճակներում նախազգուշացնելու և գործելու համակարգի ուժերին ու միջոցներին, ինչպես նաև բնակչությանը:

#### 4.7. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒԺԵՐ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Արտակարգ իրավիճակում վթարային-փրկարարական ծառայության, շտապ բժշկական օգնության ծառայության, տնտեսության պոտենցիալ վտանգավոր օբյեկտների և արտակարգ իրավիճակների հավանական աղբյուրների դիտման ու վերահսկողության ուժերի և միջոցների, ինչպես նաև արտակարգ իրավիճակների նախազգուշացման կամ կանխման, դրանց վերացման խնդիրները կատարելու համար ներգրավվող ուժերի ու միջոցների ամբողջությունը:

#### 4.8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՈՒԺԵՐ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Արտակարգ իրավիճակում վթարային-փրկարարական ծառայության ուժեր ու միջոցներ, քաղաքացիական պաշտպանության, շտապ բժշկական օգնության ուժեր, զինվորական մասեր ու ստորաբաժանումներ, ՆԳՆ ներքին զորքերի մասնագիտացված ջոկատներ, քիմիական ու ինժեներական զորքերի հատուկ զորամասեր, փրկարարական կազմավորումների և կամավոր հասարակական կազ-



մակերպությունների ջրկատներ ու խմբեր, որոնք նախատեսված են արտակարգ իրավիճակի գոտիներում և վնասված օջախներում վթարային-փրկարարական, վթարային-վերականգնողական և այլ անհետաձգելի աշխատանքներ կատարելու համար:

#### 4.9. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐ /ՔՊ ՈՒԺԵՐ/

Քաղաքացիական պաշտպանության ոչ ռազմականացված կազմավորումներ ու զորքեր, ինչպես նաև քաղաշտպանության պլաններին համապատասխան ներգրավվող պետական կառավարման հանրապետական և տարածքային-վարչական մարմինների կազմակերպություններ ու հիմնարկներ, որոնք նախատեսված են քաղաքացիական պաշտպանության խնդիրներ կատարելու համար:

#### 4.10. ՈԱԶՄԱԿԱՆԱՑՎԱԾ ԼԵՌՆԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՋՈԿԱՏՆԵՐ/ՈԼՋ/

Որոշակի պրոֆիլի պրոֆեսիոնալ-մասնագետների կազմավորումներ, որոնք նախատեսված են արդյունաբերական անվտանգության, հակահրդեհային և հակավթարային պաշտպանության ոլորտներում կանխարգելիչ աշխատանքներ կատարելու, ինչպես նաև տնտեսության համապատասխան ճյուղերի լեռնաարդյունահանման ձեռնարկություններում մարդկանց փրկելու և վթարները վերացնելու համար:

#### 4.11. ՎԹԱՐԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ/ՎՓԾ/

Արտակարգ իրավիճակներում նախազգուշացնելու և գործելու համակարգի միջգերատեսչական գործառնական-կազմակերպական կառուցվածք, որը ստեղծվել է տարածքային, ու գերատեսչական կամ ճյուղային վթարային-փրկարարական, հրշեջ պահպանության ծառայությունների հիման վրա՝ արտակարգ իրավիճակների գոտիներում վթարային-փրկարարական աշխատանքներ կազմակերպելու և հետախուզում կատարելու, ինչպես նաև համապատասխան տարածքում հրդեհները մարելու և հակահրդեհային պաշտպանության միջոցառումներ իրականացնելու նպատակով:

#### 4.12. ՎԹԱՐԱՅԻՆ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐ

Տարածքային և ճյուղային վթարային-փրկարարական ծառայությունների ուժեր, ինչպես նաև մշտական պատրաստության վթարային-փրկարարական ուժեր, որոնք ստեղծվում են նվազագույն կարճ ժամկետներում արտակարգ իրավիճակների գոտիներում վթարային-փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ կատարելու համար:

#### 4.13. ՄՇՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԹԱՐԱՅԻՆ-ՓՐԿԱՐԱ ՐԱԿԱՆ ՈՒԺԵՐ/ՄՊՎՓՈՒ/

Արտակարգ իրավիճակներում նախազգուշացնելու և գործելու համակարգի ուժեղի ու միջոցների բաղկացուցիչ մաս, որը ստեղծվում է տարածքների և ճյուղերի կան գերատեսչությունների վթարային-փրկարարական ստորաբաժանումներից, քաղաքացիական պաշտպանության զորքերի արագաշարժ ստորաբաժանումներից քիմիական և ինժեներական զորքերից, որոնք գտնվում են մարտական հերթապահության մեջ, ինչպես նաև արտակարգ իրավիճակում շտապ բժշկական օգնության ծառայության ուժեր ու համապատասխան մասնագիտացում ունեցող պրոֆեսիոնալ-փրկարարների հերթապահող խմբեր, որոնց նպատակն է արագ ժամանելն ու արտակարգ իրավիճակի գոտիներում հնարավոր նվազագույն ժամկետում վթարային-փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ կատարելը:

#### 4.14. ԿԹԱՐԱՅԻՆ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ

Մշտապես պատրաստ վիճակում գտնվող պրոֆեսիոնալ պատրաստվածություն ունեցող մարդկանց խումբ, որը հագեցած է հատուկ տեխնիկայով ու սարքավորումներով և նախատեսված է արտակարգ իրավիճակների գոտում արագ կարգով առաջնահերթ վթարային-փրկարարական, վթարային-վերականգնողական ու այլ անհետաձգելի աշխատանքներ կատարելու համար:

#### 4.15. ԿԹԱՐԱՅԻՆ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ

Պրոֆեսիոնալ-շինարարների ջոկատ, որը ստեղծվում է նախարարությունների համապատասխան շինարարական ու մոնտաժային կազմակերպություններում և կառավարման այլ կենտրոնական մարմիններում՝ արտակարգ իրավիճակի գոտիներում կենսապահովման առաջնահերթ օբյեկտները վերականգնելու անհետաձգելի աշխատանքներ կատարելու նպատակով:

#### 4.16. ՓՐԿԱՐԱՐ

Փրկարարական աշխատանքներ կատարելու համար նախապատրաստված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ատեստավորված ֆիզիկական անձ:

#### 4.17. ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐ

Փրկարարական աշխատանքներ կատարելու համար նախատեսված՝ համապատասխան տեխնիկական հագեցվածությամբ, մասնագիտացված փրկարարներից բաղկացած կազմավորումներ:

#### 4.18 ՓՐԿԱՐԱՐՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ

Կամավորության հիման վրա հասարակական կազմակերպությանը կից ստեղծված վթարային-փրկարարական աշխատանքների առանձին տեսակների գծով պրոֆեսիոնալ մասնագետների ջոկատ կամ խումբ, որը նախատեսված է արտակարգ իրավիճակի գոտիներում մարդկանց որոնելու և փրկելու համար:

#### 4.19.ՎԹԱՐԱՅԻՆ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՄՊԵՏՉԵՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Վթարային-փրկարարական ծառայության օպերատիվ կառավարման մարմին, որը ստեղծվում է քաղաքացիական պաշտպանության համապատասխան շտաբներից՝ կառավարման պետական ու տնտեսական մարմիններից պրոֆեսիոնալ մասնագետներ ներգրավելով, և նախատեսված է արտակարգ իրավիճակների գոտիներում վթարային-փրկարարական ծառայությունների ուժերի աշխատանքը կազմակերպելու համար:

#### 4.20.ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Արտակարգ իրավիճակներում նախազգուշացնելու և գործելու համակարգի բաղկացուցիչ մաս, որն իրենից ներկայացնում է արտակարգ իրավիճակի գոտիներում կառավարման մարմինների ուժերի ու միջոցների, ինչպես նաև առողջապահության կառավարման և բնակչությանը շտապ բժշկասանիտարական օգնություն ցույց տալու տեխնոլոգիայի մեթոդների ամբողջությունը:

#### 4.21.ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐ

Տարբեր նշանակության բժշկական կազմավորումներ, որոնք ստեղծվում են արտակարգ իրավիճակի գոտիներում գտնվող կլինիկական բազաներում, շտապ, խիստ շտապ և պլանային-կոնսուլտատիվ բժշկական օգնության կայաններում բուժական-կանխարգելիչ, սանիտարահամաճարակային և առողջապահության այլ հաստատություններում գործելու համար:

#### 4.22. ՎԹԱՐԱՅԻՆ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԿԻՆՈՒՈՂԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ինքնուրույն կամավոր հասարակական կազմակերպություն, որը նախատեսված է ուղեկցող կինոլոգներ/շնագետներ/ պատրաստելու և շներ վարժեցնելու համար, ինչպես նաև դրանց փրկարարների այլ կազմավորումների հետ արտակարգ իրավիճակի գոտիներում որոնողական ու փրկարարական աշխատանքներում օգտագործելու համար:

#### **4.23. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ**

Վթարային-փրկարարական աշխատանքների մեքենայացման միջոցներ, փոքր մեքենայացման և մեխանիզացիայի գործիքի միջոցներ, տրանսպորտային, վերանորոգման, օժանդակ, զետանցման ու կամրջաշինական միջոցներ, անհատական պաշտպանության միջոցներ և ուրիշ հատուկ միջոցներ, որոնք արտակարգ իրավիճակի գոտիներում վթարային-փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ կատարելիս օգտագործում են արտակարգ իրավիճակների վերացման ուժերը:

#### **4.24. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՓՈՔՐ ՄԵՔԵՆԱՅԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**

Էներգիայի արտաքին կամ ինքնաբավ աղբյուրներով աշխատող հատուկ դյուրակիր մեքենանար ու մեխանիզմներ, որոնք նպաստում են արտակարգ իրավիճակների գոտիներում վթարային-փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ կատարելու ժամանակ գործողությունների արդյունավետությունը բարձրացնելուն և ֆիզիկական էներգիայի ծախսումները նվազեցնելուն:

### **5. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

#### **5.1. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՍՎԱՐԳԻ ԱՇԽԱՏԱՆՔ**

Արտակարգ իրավիճակներում նախազգուշացնելու և գործելու համակարգի բոլոր կազմակերպական կառուցվածքների գործունեությունը՝ ուղղված կազմակերպական, սոցիալ-տնտեսական, ինժեներատեխնիկական և հատուկ միջոցառումների համալիր պլանավորմանը, նախապատրաստմանն ու իրականացմանը, ինչպես նաև այդ համակարգի մեջ մտնող ուժերի ու միջոցների գործողությունները՝ արտակարգ իրավիճակները նախազգուշացնելու և վերացնելու նպատակով:

#### **5.2. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

Արտակարգ իրավիճակների նախազգուշացման կամ վերացման խնդիրներից որևէ մեկի լուծմանն ուղղված կազմակերպական այն գործողությունների ամբողջությունը, որոնք կատարվում են արտակարգ իրավիճակներում նախազգուշացնելու և գործելու ամենօրյա կառավարման մարմինների, տարածքային, ճյուղային ու զերատեսչական ենթահամակարգերի ուժերի և միջոցների կողմից:

### 5.3. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Արակարգ իրավիճակների առաջացմանը վաղօրոք նախաատրաստություն և կառավարման մարմիններին ու բնակչությանը արտակարգ իրավիճակի աղբյուրի հավանա կանության կամ անխուսափելիության վերաբերյալ ժամանակին տեղեկացում, ինչպես նաև դրա սկսվելու կամ բնակչությանն անմիջական սպառնալիքի մասին ազդարարում:

### 5.4. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽՈՒՄ

Արտակարգ իրավիճակներ առաջացնող գործոնների կանխորոշում և վերացում:

### 5.5. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Արտակարգ իրավիճակի գոտիներում կառավարման համակարգի, ուժերի ու միջոցների արդյունավետ գործողությունների, ինչպես նաև արտակարգ իրավիճակների աղբյուրների ծագման հետևանքների վերացման գործում բնակչության և նրա կանսապահովման համար նախօրոք պայմանների ստեղծում:

### 5.6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Տարբեր բնույթի արտակարգ իրավիճակների աղբյուրների առաջացման պատճառները թույլ չտալուն ու բացառելուն, ինչպես նաև դրանց հետևանքների սահմանափակմանն ուղղված նախօրոք միջոցառումների անցկացում:

### 5.7. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Որոշակի տարածքում պոտենցիալ վտանգավոր օբյեկտների կամ արտակարգ իրավիճակի աղբյուրների առավելագույն ռիսկի և անցանկալի վիճակների, արտակարգ իրավիճակների աղբյուրների առաջացման կանխման կամ հետևանքների սահմանափակման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների արագ վերացման համար այլընտրանքային ուղիների և անհրաժեշտ միջոցների մասին հավանական պատկերացման մշակում:

### 5.8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Տարերային աղետներից, վթարներից կամ աղետներից, համաճարակներից, էպիզոտիաներից /անասնահամաճարակներից/ և էպիֆիտոտիաներից բնակչության, տնտեսության օբյեկտների և շրջակա բնական միջավայրի պաշտպանության բնագավառում նպատակային երկարաժամկետ, ինչպես նաև արտակարգ իրավիճակների նախազգուշացման միջին ժամկետային և ընթացիկ միջոցառումների պլանների մշակումներ:

## **6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

### **6.1. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՄՊԼԵՔՍԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

Արտակարգ իրավիճակներում մարդկանց կյանքի և առողջության պաշտպանության, ինչպես նաև քաղաքացիների, պետության և այլ սեփականատերերի ունեցվածքի պահպանության նպատակով իրավական, կազմակերպական և ինժեներատեխնիկական միջոցառումներ:

### **6.2. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՐՈՎՈՒՄ**

Կազմակերպական, ինժեներատեխնիկական և հատուկ այնպիսի միջոցառումներ, որոնք ուղղված են արտակարգ իրավիճակներում մարդկանց կյանքին ու առողջությանը սպառնացող վտանգը, նրանց անձնական ունեցվածքի կորուստները և կենսաապահովման խախտումները կանխելու և կամ առավելագույնս նվազեցնելուն, ինչպես նաև արտակարգ իրավիճակի գոտում մարդկանց որոնելն ու փրկելը կազմակերպելուն, տուժածներին բժշկական և բնակչության կենսաապահովման նորմալ պայմաններ ստեղծելու գործում օգնություն ցուցաբերելուն:

### **6.3. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԵԼՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ**

Քաղաքացիական բնակչության կողմից գիտելիքների նպատակասլաց կուտակում, այնպիսի վտանգներից պաշտպանվելու ժամանակ անհրաժեշտ հմտությունների ձեռք բերում ու ամրապնդում, որոնք առաջանում են վթարների, աղետների, տարերային աղետների, համաճարակների, անասնահամաճարակների կամ հարձակման ժամանակամիջոցների ներգործության հետևանքով, ինչպես նաև արտակարգ իրավիճակի գոտիներում և հարվածի օջախում վթարային-փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների մասնակցելիս:

### **6.4. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ**

Բնակչության կողմից այնպիսի գիտելիքների, հմտությունների և կարողությունների նպատակասլաց տիրապետման ու գործնական ամրապնդման համակարգ, որոնք պահանջվում են արտակարգ իրավիճակներից և հարձակման ժամանակակից միջոցների ներգործությունից պաշտպանվելիս, ինչպես նաև խաղաղ ու պատերազմի ժամանակ վթարային-փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների մասնակցելիս:

## 6.5. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Բնակչության մեջ այնպիսի արտակարգ իրավիճակների աղբյուրներ առաջանալու նկատմամբ հոգեբանական կայունության ձևավորման գործընթաց, որոնք մարդու կյանքի ու առողջության համար վտանգավոր են և կազմալուծող ազդեցություն են գործում նրա հոգեկանի, ինչպես նաև գոյությունը պահպանելու և արտակարգ իրավիճակներում ակտիվ գործողությունների դիմելու հոգեբանական պատրաստվածության վրա:

## 6.6. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՊԱՐՈՒՄ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՑՆԵՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակներ ստեղծվելու, այդ թվում հարձակման ժամանակակից միջոցների ներգործության ժամանակ բնակչության կյանքն ու առողջությունը պահպանելու նպատակով նրան կոլեկտիվ պաշտպանության միջոցներում հավաքելը, տեղավորելն ու դրանցում մնալն ապահովելը:

## 6.7. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ

Ինժեներական կառույց, որը նախատեսված է պոտենցիալ վտանգավոր օբյեկտներում վթարների, աղետների կամ այդ օբյեկտների տեղաբաշխման շրջաններում տարերային աղետների հետևանքով առաջացող վտանգներից, ինչպես նաև հարձակման ժամանակակից միջոցների ազդեցությունից մարդկանց, տեխնիկան և գույքը պատսպարելու համար:

## 6.8. ԱՊԱՍՏԱՐԱՆ

Պաշտպանական կառույց, որն ապահովում է մարդկանց առավել հուսալի պաշտպանությունը միջուկային զենքի խոցող բոլոր գործոններից՝ հարվածային ալիքից, լուսաճառագայթումից, թափանցող ճառագայթումից և վարակումից, ինչպես նաև հարձակման ժամանակակից միջոցներից, թունավոր նյութերից ու մանրէական /կենսաբանական/ միջոցներից, իսկ հրդեհի գոտիներում՝ բարձր ջերմաստիճանների ներգործությունից:

## 6.9. ՀԱԿԱՆՈՒԱԳԱՅԹԱՅԻՆ ԹԱՔՍՏՈՑ

Պաշտպանական կառույց, որը նախատեսված է տեղանքի ռադիոակտիվ վարակման ժամանակ բնակչությանը իոնացնող ճառագայթման ներգործությունից պատսպարելու և այնտեղ գտնվելու ընթացքում նրա կենսագործունեությունը ապահովելու համար:

#### 6.10. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՆՅԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Պիտույքներ/միջոցներ/, որոնք նախատեսված են մարդուն և կենդանուն ռադիոակտիվ, թունավոր ու վտանգավոր քիմիական նյութերից, ախտածին կենսաբանական/մանրէական/ միջոցներից և միջուկային պայթյունի լուսաճառագայթումից պաշտպանելու համար:

#### 6.11. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄ

Ռադիոակտիվ աղտոտման գոտում բնակչության գործելու և նրա կողմից պաշտպանության միջոցներն ու եղանակները կիրառելու կարգը՝ դոզան/չափաքանակը/ հնարավորին չափ պակասեցնելու նպատակով:

#### 6.12. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Արտակարգ իրավիճակներում մարդկանց կյանքի ու առողջության վրա վտանգավոր քիմիական նյութերի ներգործությունը կանխելու և թուլացնելու նպատակով իրականացվող կազմակերպական, ինժեներատեխնիկական և հատուկ միջոցառումներ:

#### 6.13. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Արտակարգ էկոլոգիական իրավիճակներում տուժածներին բժշկական օգնությանը ապահովում, մարդկանց կյանքի փրկում և վիրավորների մեջ տրավմատիկ վնասվածքների հետևանքների նվազեցում, ինչպես նաև արտակարգ էկոլոգիական իրավիճակի գոտում օգտագործելու համար դեղամիջոցների, վիրակապության նյութերի և համապատասխան նյութատեխնիկական միջոցների գիտականորեն հիմնավորված ու տնտեսապես արդարացված պաշարների նախօրոք ստեղծում:

#### 6.14. ԱՆՅԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՋՈՑ

Բժշկական պատրաստուկ կամ առարկա, որը նախատեսված է արտակարգ իրավիճակի աղբյուրի ախտահարող գործոնների ազդեցությունը մարդու վրա կանխելու կամ թուլացնելու համար:

#### 6.15. ՕՐՍԵՐՎԱՑԻԱ

Բժշկական համալիր միջոցառումներ՝ վարակիչ հիվանդություններով հիվանդների հետ շփումներ ունեցած և կարանտինի գոտուց դուրս եկած առողջ մարդկանց մեկուսացնելու և զննելու համար:



## 6.16. ԿԱՐԱՆՏԻՆ

Վարչական և բժշկասանիտարական համալիր միջոցառումներ, որոնք կանխում են կարանտինային ինֆեկցիաների մուտքն ու դրանց տարածումը համաճարակի օջախի կամ կենսաբանական/մանրէաբանական/ վարակի օջախի սահմաններից դուրս:

## 6.17. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՅԱՆՈՒՄ/ԷՎԱԿՈՒՄՑԻԱ/

Արտակարգ իրավիճակի կամ հավանական արտակարգ իրավիճակի գոտիներից բնակչությանը կազմակերպված կերպով դուրս բերելու և տեղավորելու, ինչպես նաև տեղավորման շրջանում տարահանվածներին կենսաապահովելու համալիր միջոցառումներ:

## 6.18. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՊԱԿՈՎՈՒՄ

Արտակարգ իրավիճակների գոտում, պաշտպանական գոտում պատսպարվելու, տարահանման միջոցառումներ և վթարային-փրկարարական աշխատանքներ կատարելու ընթացքում մարդկանց կենսաապահովման համար նվազագույնս անհրաժեշտ պայմանների ստեղծում:

## 6.19. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԽՄԲԱՅԻՆ ՎԱՐՔ

Հանկարծակի և վտանգավոր պատահարի կամ այդպիսի պատահարի սպառնալիքի առջև հայտնված մարդկանց խմբի մեծ մասի վարքը, որը շոշափում է խմբում ընդգրկված բոլոր մարդկանց շահերը՝ զուգորդված մարդկային զոհերով ու նյութական վնասով և բնութագրվում է հասարակական կարգ ու կանոնի նկատելի կազմալուծմամբ:

## 6.20. ԽՈՒՃԱՊ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ

Արտակարգ իրավիճակի գոտում անակնկալ կերպով ուժեղ իրական կամ երևակայական վտանգի ենթարկված և հուզումով համակված մեկ վայրում գտնվող մեծ թվով մարդկանց անկառավարելի գործողություններ, որոնք դրսևորվում են այդ վայրից անհապաղ հեռանալու ցանկությամբ:

## 7. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄ

### 7.1. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱՑՈՒՄ

Արտակարգ իրավիճակի գոտում և նրան հարող շրջաններում համապատասխան ուժերով ու միջոցներով հետախուզման ու անհետաձգելի աշխատանքների կատարում, ինչպես նաև տուժած բնակչության և այդ ուժերի անձնակազմի կենսաապահովման կազմակերպում:

## 7.2. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՈՒԺԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտակարգ իրավիճակի գոտում և նրան հարող շրջաններում համապատասխան ուժերով ու միջոցներով անհետաձգելի համալիր աշխատանքների օպերատիվ կատարում՝ արտակարգ իրավիճակը հաղթահարելու, մարդկանց որոնելու և փրկելու, տուժածներին օգնություն ցույց տալու, վիրավորներին ու հիվանդներին տարահանելու, նյութական արժեքները պահպանելու կամ դրանց վնասը նվազեցնելու, ինչպես նաև արտակարգ իրավիճակի գոտում բնակչության կենսաապահովումը կազմակերպելու նպատակով:

## 7.3. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Արտակարգ իրավիճակի գոտում առաջնահերթ աշխատանքների կատարում ուղղված մարդկանց կյանքին ու առողջությանը սպառնացող այնպիսի գործոնների ազդեցության վտանգի աստիճանը վերացնելուն կամ նվազեցնելուն, որոնք դժվարացնում են նրանց որոնումն ու փրկումը կամ էլ սաստկացնում են արտակարգ իրավիճակի աղբյուրների ծագման հետևանքները, ինչպես նաև բնակչության կանսաապահովման օբյեկտներում իրականացվող վթարային-փրկարարական վթարային-վերականգնողական աշխատանքները:

## 7.4. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՎԹԱՐԱՅԻՆ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Արտակարգ իրավիճակի գոտում այնպիսի առաջնահերթ աշխատանքների իրականացում, որոնք ուղղված են հրդեհների մեկուսացմանը և մարմանը, հարվածի կամ ախտահարման օջախ մատակարարվող հեղուկ վառելիքի, գազի, էլեկտրաէներգիայի և ջրի աղբյուրների վթարային անջատմանը, մարդկանց որոնմանն ու փրկմանը, տուժածներին նախաբժշկական, ինչպես նաև առաջին ու շտապ բուժօգնություն ցույց տալուն և անհրաժեշտության դեպքում նրանց քաղաքաներձ գոտի տարահանելուն:

## 7.5. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՎԹԱՐԱՅԻՆ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Արտակարգ իրավիճակի գոտում կատարվող այնպիսի անհետաձգելի աշխատանքներ, որոնք ուղղված են փլուզմամբ սպառնացող շենքերի կոնստրուկցիաների ամրացմանը կամ փլեցմանը, աղետի վայրում մնացած բնակչության ու փրկարարների կենսաապահովման առաջնահերթ օբյեկտները ժամանակավոր սխեմաներով վերանորոգելուն ու վերականգնելուն, ինչպես նաև տարածքի սանիտարական մաքրմանը:

## 7.6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Բուժական-ախտորոշող և սանիտարահամաճարակային այնպիսի համալիր միջոցառումներ, որոնք իրականացվում են արտակարգ իրավիճակի գոտում սեղմ ժամկետներում՝ մարդու կյանքին ու առողջությանը սպառնացող հանգամանքներում, վնասվածքների և հանկարծահաս հիվանդությունների պայմաններում:

## 7.7. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄ

Ախտածին կենսաբանական/մանրէաբանական/ միջոցների, ռադիոակտիվ և վնասակար քիմիական նյութերի ներգործությունից տուժածների հազուստի ու կոշիկի, ինչպես նաև մաշկածածկույթի և լորձաթաղանթի մեխանիկական մաքրում ու վարակազերծում:

## 7.8. ՎԱՐԱԿԱԶԵՐԾՈՒՄ

Տարածքի, տնտեսության և այլ նշանակության օբյեկտների, ջրի, պարենի, սննդի հումքի ու անասնակերերի՝ մինչև թույլատրելի նորմաների սահմանը ռադիոակտիվ և վտանգավոր քիմիական նյութերով, ախտածին կենսաբանական/մանրէաբանական/ միջոցներով աղտոտվելու ու վարակվելու նվազեցման գործընթաց՝ ապատակտիվացման, զազազերծման և ախտահանման, ինչպես նաև թունազերծման եղանակով:

## 7.9. ԱՊԱԱԿՏԻՎԱՑՈՒՄ

Չողի մակերեսից, սպառազինությունների, տեխնիկայի, գույքի հազուստի և այլ օբյեկտների վրայից ռադիոակտիվ աղտոտման հեռացում, ինչպես նաև ռադիոակտիվ նյութերից ջրի, գյուղատնտեսական արտադրանքի ու պարենամթերքի ֆիզիկաքիմիական կամ մեխանիկական եղանակներով մաքրում՝ մարդկանց և պարենը արտաքին ու ներքին ճառագայթահարումից զերծ պահելու նպատակով:

## 7.10. ԳԱԶԱԶԵՐԾՈՒՄ

Մարդկանց վարակվելը և թունավորվելը կանխելու նպատակով հողի մակերեսից, տնտեսության զանազան օբյեկտների, սպառազինությունների, տեխնիկայի, գույքի ու պարենի վրայից տարբեր միջոցներ ու եղանակներ օգտագործելով վտանգավոր քիմիական նյութերի չեզոքացում և հեռացում:

## 7.11. ԱԽՏԱՅԱՆՈՒՄ

Մարդկանց և կենդանիների վարակիչ հիվանդությունների հարուցիչներին արտաքին միջավայրում ֆիզիկական, քիմիական և կենսաբանական մեթոդներով ոչնչացնելու կամ հեռացնելու գործընթաց:

## 7.12. ԹՈՒՆԱԶԵՐԾՈՒՄ

Մանրէական, բուսական և կենդանական ծագում ունեցող տոկսիկների/թույների/քայքայում արտաքին միջավայրում:

## 7.13. ԴԵՐԱՏԻԶԱՑԻԱ/կրծողների ոչնչացում/

Կրծողների ոչնչացմանն ուղղված կանխարգելիչ և վերացնող միջոցառումներ՝ նրանց հարուցած վարակիչ հիվանդությունների տարածումը և տնտեսական վնասը կանխելու նպատակով:

## 7.14. ԴԵԶԻՆՍԵԿՑԻԱ /միջատազերծում/

Վարակիչ հիվանդությունների հարուցիչ տարածող վնասակար հատվածոտանիների, գյուղատնտեսական վնասատուների ոչնչացում՝ ֆիզիկական, քիմիական և կենսաբանական մեթոդներով:

## 7.15. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՅԵՏԱԽՈՒԶՈՒՄ

Արտակարգ իրավիճակներում նախազգուշացնելու և գործելու համակարգի գործողություններն ապահովելու ձև՝ արտակարգ իրավիճակի աղբյուրների ծագման հետևանքով ստեղծված իրադրության մասին ժամանակին հավաստի տվյալներ հայթայթելու և հաղորդելու համար:

## 7.16. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԻՆՑԵՆՏՐԱԿԱՆ ՅԵՏԱԽՈՒԶՈՒՄ

Արտակարգ իրավիճակի գոտում և նրա մոտակա մատույցներում ինժեներական իրադրության , տեղի ունեցող ավերածությունների, հեղեղումների, հրդեհների, փլուզումների և վնասվածքների բնույթի ու աստիճանի, ինչպես նաև ՔՊ խմբերի տեղափոխման և հիվանդներին ու վիրավորներին տարահանելու հնարավոր երթուղիների վերաբերյալ տվյալների հավաքում ու հաղորդում:

## 7.17. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՈԱԴԻԱՑԻՈՆ ՅԵՏԱԽՈՒԶՈՒՄ

Արտակարգ իրավիճակի գոտում տեղանքի, օդի, ջրի, օբյեկտների, տեխնիկայի և մարդկանց ռադիոակտիվ աղտոտվածության բնույթի, աստիճանի գոյության մասին տվյալների հավաքում ու հաղորդում:

**7.18. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՈՏՈՒՄ ՔԻՄԻԱԿԱՆ  
ՅԵՏԱԽՈՒԶՈՒՄ**

Արտակարգ իրավիճակի գոտում ֆիտոտոկսիկատներով /բուսական թույներով/, թունավորող ու վտանգավոր քիմիական նյութերով օդի, տեղանքի, շենքերի և կառույցների, տեխնիկայի, ջրի, պարենամթերքի, սննդահումքի ու անասնակերերի, ինչպես նաև մարդկանց ու գյուղատնտեսական կենդանիների քիմիական վարակման առկայության բնույթի, չափերի ու աստիճանի վերաբերյալ տվյալների հավաքում ու հաղորդում:

**7.19. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՈՏՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ  
ՅԵՏԱԽՈՒԶՈՒՄ**

Արտակարգ իրավիճակի գոտում սանիտարահամաճարակային և բժշկական իրադրության տվյալների հավաքում ու հաղորդում՝ ախտահարվածների նշտապ բժշկասանիտարական օգնություն ցույց տալու գործում առկա ուժերն ու միջոցները ռացիոնալ օգտագործելու նպատակով:

**8. ՊԱՐԵՆԻ, ՍՆՆԴԱՅՈՒՄՔԻ, ԱՆԱՍՆԱԿԵՐԻ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ, ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՎԱՐԱԿՎԵԼՈՒՑ ԵՎ ԱՂՏՈՏՎԵԼՈՒՑ**

**8.1. ՊԱՐԵՆԻ, ՍՆՆԴԱՅՈՒՄՔԻ ԵՎ ԱՆԱՍՆԱԿԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՐԱԿՎԵԼՈՒՑ ՈՒ ԱՂՏՈՏ ՎԵԼՈՒՑ**

Արտակարգ իրավիճակներում կազմակերպական, ինժեներատեխնիկական և սանիտարական այնպիսի միջոցառումների համալիր, որոնք անցկացվում են պարենի, սննդահումքի և անասնակերի ռադիոակտիվ աղտոտումը, քիմիական ու կենսաբանական/մանրէաբանական/ վարակումը կանխելու կամ նվազեցնելու նպատակով:

**8.2. ՎԱՐԱԿՎԱԾ ԵՎ ԱՂՏՈՏՎԱԾ ՊԱՐԵՆԻ, ՍՆՆԴԱՅՈՒՄՔԻ  
ՈՒ ԱՆԱՍՆԱԿԵՐԻ ՎԵՐԱՅՍԿՈՒՄ**

Ռադիոակտիվ, վնասակար քիմիական նյութերով ու ախտածին կենսաբանական/մանրէաբանական/ միջոցներով սննդահումքի և անասնակերի, պարենի վարակվածության կամ աղտոտման աստիճանի որոշում՝ արտակարգ իրավիճակներում դրանց վարակազերծման ուղղությամբ աշխատանքներ կատարելու անհրաժեշտությունը պարզելու նպատակով:

**8.3. ՎԱՐԱԿՈՒՄԻՑ ԵՎ ԱՂՏՈՏՈՒՄԻՑ ԶՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ  
ԵՎ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

Կազմակերպական, ինժեներատեխնիկական ու սանիտարական միջոցառումների համալիր՝ ուղղված արտակարգ իրավիճակներում ջրի աղբյուրները և ջրամատակարարման

համակարգերը ռադիոակտիվ աղտոտումից, քիմիական ու կենսաբանական/մանրէաբանական/ վարակումից կանխելուն կամ նվազեցնելուն:

#### 8.4. ՎԱՐԱԿՈՒՄԻՑ ԵՎ ԱՂՏՈՏՈՒՄԻՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպական, անասնաբուժական ինժեներատեխնիկական և այլ միջոցառումների համալիր՝ ուղղված արտակարգ իրավիճակներում գյուղատնտեսական կենդանիների ռադիոակտիվ աղտոտումից, քիմիական ու կենսաբանական/մանրէական/ վարակումից կանխելուն կամ նվազեցնելուն:

#### 8.5. ՎԱՐԱԿՈՒՄԻՑ ԵՎ ԱՂՏՈՏՈՒՄԻՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպական, ագրոտեխնիկական, ինժեներատեխնիկական և այլ միջոցառումների համալիր՝ ուղղված արտակարգ իրավիճակներում բուսաբուծությանը ռադիոակտիվ աղտոտումից, քիմիական ու կենսաբանական վարակումից հասցվող վնասը կանխելուն կամ նվազեցնելուն:

#### 8.6. ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Գյուղատնտեսական կենդանիների պաշտպանության նպատակով անցկացվող անասնաբուժական-կանխարգելիչ, հակաանասնահամաճարակային, բուժական և սանիտարական միջոցառումներ, լաբորատորային-ախտորոշման հետազոտություններ, ինչպես նաև բնակչությանը անասնապահական և բուսաբուծական այնպիսի մթերքներով ապահովելու համար անցկացվող անասնաբուժական-սանիտարական փորձաքննություն, որոնք արտակարգ իրավիճակներում աղտոտված չեն ռադիոակտիվ նյութերով և վարակված չեն վնասակար քիմիական նյութերով, ինչպես նաև ախտածին կենսաբանական /մանրէական/ միջոցներով: